



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ  
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

29 դեկտեմբերի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի  
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Պետրոսյանի

Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի

Ա. Թունյանի

Ուսումնասիրելով Գարեգին Խաչատրյանի անհատական դիմումի ընդունելիության  
հարցը,

**Պ Ա Ր Ձ Ե Ց .**

Համաձայն ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Գարեգին Խաչատրյանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան (դիմումը ՀՀ սահմանադրական դատարան է մուտքագրվել 2016 թվականի դեկտեմբերի 23-ին)՝ խնդրելով.

«... ճանաչել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ գլուխը և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածը ՀՀ Սահմանադրության 1-ին, 6-րդ, 61-րդ, 63-րդ հոդվածներին հակասող և անվավեր այնքանով, որքանով բացառում է քաղաքացիական կամ վարչական գործերով մեկից ավելի պահանջների առկայության դեպքում հիմնական պահանջի ընտրությամբ մյուս պահանջների քննությունը»:

Ղեկավարվելով §Սահմանադրական դատարանի մասին՝ ՀՀ օրենքով և ելնելով խնդրո առարկա անհատական դիմումի և կից փաստաթղթերի նախնական ուսումնասիրության արդյունքներից՝ գտնում ենք, որ դիմումի հիման վրա գործի քննության ընդու-

նումը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

- խնդրո առարկա գործին վերաբերելի դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողի կողմից վիճարկվող իրավադրույթները նրա նկատմամբ չեն կիրառվել:

ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ սահմանադրական դատարան կարող է դիմել «յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը»:

ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետն իր կոնկրետացումն է ստացել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որը, նշված սահմանադրական դրույթին և դրա հիմքում ընկած սահմանադրական կոնկրետ վերահսկողության տրամաբանությանը համահունչ, սահմանել է ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների ընդունելիության պայմանները, այդ թվում՝ օրենքի դրույթի կիրառման պայմանը:

Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի՝ 17.03.2009թ. ՍԴԱՌ-21 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման՝ «...«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 1-ին մասում նշված որևէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ»:

- խնդրո առարկա անհատական դիմումն ակնհայտ անհիմն է: Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա չէ ՏՍահմանադրական դատարանի մասին՝ ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներին համահունչ իրավաբանորեն ձևակերպված որևէ հիմնավորում, ինչպես նաև դիմողը չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթների հակասահմանադրականության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը:

- դիմողը ձևականորեն վիճարկելով իրավադրույթների սահմանադրականության հարցը՝ ըստ էության բարձրացնում է այդ դրույթների կիրառման իրավաչափության հարց: Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի՝ 17.03.2009թ. ՍԴԱՌ-21 որոշմամբ

արտահայտած իրավական դիրքորոշման՝ Տ...բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց կամ հետապնդում է այլ նպատակներ, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ ՏՍահմանադրական դատարանի մասին՝ ՀՀ օրենքի 32 հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ՝:

Հարկ է նաև նշել, որ դիմումին կից չի ներկայացվել խնդրո առարկա գործին վերաբերելի ՀՀ վճռաբեկ դատարանի 2016 թվականի հոկտեմբերի 19-ի ՏՎճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին՝ որոշումը (ԵԿԴ/4577/02/14 քաղաքացիական գործով):

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՏՍահմանադրական դատարանի մասին՝ ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 6-րդ կետերով, ինչպես նաև 69-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

### **Ո Ր Ո Շ Ե Ց .**

Գարեգին Խաչատրյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

**Նախագահող՝**

**Անդամներ՝**

29 դեկտեմբերի 2016 թվականի

ՍԴԴԿՈ/1-37